ՀԱՐԻՒՐ ԱՌԱԿՔ ՄԱԼԱՅԻ ԱԶԳԻ

ՀԱՒԱՔԵԱՑ Ս. ՏԷՐ Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

◁ ○ ▷

1. Այս բռաս, տառօհ դիդաշամ պաղի։

Եթէ ունիս բրինձ դիր զայն ի մէջ անկեղեւեալ որիզոյ։

Պատուէր ծածկապահութեան։ Նախ քան անցանելոյն Մալայեան Թերակղզւոյն (իբր երեսուն և վեց ամսք յառաջ) ընդ Բրիտանական Հովանաւորութեամբ, գաւառային բնիկ բռնապետութիւնք անպակաս էին։ Երբ շինական մի իմանայր որ գիւղապետն շրջէր ի մերձակայս, ահապարելով թաքուցանէր զիւր պարէն ի տակառին որ պարունակէր զորիզ չև ևս հանեալ ի կեղևոյն։ Ապաքէն՝ փոխաբերաբար, առակս այս ակնարկէ առ կարևորութիւն կարի խորագէտ լինելոյ ի խորհուրդ մի որ պահանջէ զանհրաժեշտ հարկաւորութիւն պահելոյ ի ծածուկ։

2. Այս հուչան, աղս պաճաս
Այս հառիրուչ թայաս։

Մերթ անձրևէ, մերթ տօթանայ, եկեսցէ օր մի առ ի վրէժխնդրութիւն։

Առակ մի ի սփոփումն յաղթահարելոց։ Որպէս անձրևին իսնաւութիւն և արևուն պայծառութիւն տեղի տան միմեանց փոփոխակի, նոյնպէս և այս աւուր յաղթեալն վաղուեան յաղթողն կարելի է լինել։

3. Ապա գուհանիա մաակ մնգիգալ դի հուտան։

Զինչ օգուտ եթէ սիրամարգն զինքն սիգաճեմ ցուցանէ յանտառի միայն։

Վերաբերէ առ կին վայելչագեղ և չքնաղատեսիլ, որ համեստութեան պատճառանօք խուսափէ յընկերակցութենէ և զբաղի առանձնասիրութեամբ։

4. Աղակմհ բոյա խտու մնօլակկրհ բանկկէյ։

Միթէ կոկորդիլոսն անարգէ՞ զդի։

Ասի առ բռնաւորս և յափշտակիչս որք ազահօրէն շահախնդիր յամենայնի՝ անժուժկալութեամբ տիրապետեն ուր չունին իրաւունս և իւրացուցանեն զսեպհականութիւն այլոց, ըստ քմահաճոյից։

5. Այ եմ բռուգա ի տու կալու դի բոի մապան դի պինգան մաս, սրկսլիպուն կը հաստան ջուգա պագինիա։

Եթէ անտառահաւն ստանայ զիւր կերակուր յոսկեայ պնակէ անգամ, տակաւին առ անտառն փութայ վերադառնալ։

Այս մի է ի բազում նոյնիմաստ առակաց Մալայի Ազգին ի վկայութիւն արմատաքի խելոյ անհնարաւորութեան՝ որ ինքնուրոյն բնական է ի ծննդենէ։ Մալայիք ասեն նա ևս, «Ուպամա կինջանգ դի ռան-
« տէյ դընգրն մաս ջիկալու լընգասնեայ,
« լառի ջուգա կը հուտան մաքան ռում-
« պուտ»։ Այսինքն, զորօրինակ եթէ կապեցեալ զեղջերու ոսկեայ շղթայիւ անգամ, յագատիլն ի կապանաց՝ վազելով դիմէ յանտառ նարակիլ ի վերայ խոտոյ։ Համեմատեա Պարսկական առածն «գոգ-
« զադէ զոգ շօվազ ագեառ բեազէմ ամ
« բօզօրգ զօվազ»։ Գայլոյն ծնեալն գայլ լինիցի, եթէ ընդ մարդոյ անգամ զարգանայցէ։

6. Անակ անչինգ ի տու բույհինմհ չագի անակ մռուանգ չբաստ։

Հնարաւո՞ր է միթէ զի կորիւն շան այլափոխեսցի ի ձագ կուզ կենդանւոյն։

Ապացուցանէ ի ծննդենէ զանառակն, որոյ բարեփոխիչն անկարելի գործ մի է։ «Մու-

digitised by A.R.A.R.@

«սանգ» է կենդանի մի բնիկ Մալայեան թերակղզւոյն և որ արտադրէ զմուշկ։ Անտանելի գարշահոտ է։

7. Այսպուն իկան իանգ դիամ դիդալամ
տուչօհ լառուտան, սրկայիպուն բրտմա-
սօկ դիդալամ պուկատ ջուգա։

Մինչ անգամ այն ձկունք որք բնակին յեօթն աստիճան խորութեան ծովու, փ�-թով կամ անագան մտանիցին յուսկան ձկնորսին։

Ցուցանէ զանպիտանութիւն խոյս տալոյ ի տնօրինելոյն ի ճակատագրոյ։ «Ցուշօհ լառուտան» զոր թարգմանեցի «յեօթն աս-«տիճան խորութեան ծովու», հաւանա-կանաբար վերաբերէ Մահմետականաց այն ժողովրդական գաղափարին թէ «երկիր և «ծով ստեղծան իւրաքանչիւր յեօթն աս-«տիճանաց»։

8. Ադա այեր ադալահ ի կան,
Ադա ռուչգի բուչեհ մաքան։

Եթէ իցէ ջուր, անդ իցեն և ձկունք։ Եթէ ունիցիմք պարէն, կարեմք կերակրիլ։

Ցուցանէ անհուն նախախնամութիւն Աստուծոյ, որ հոգայ վասն իւր արարածոց, պարգևելով զկենսատու պիտոյս առ ի կենդանութիւն իւրաքանչիւրոյն։

9. Ադա պադանգ ադա բիլալանգ։

Ուր իցէ դաշտ անդ իցէ և ճպուռն։

Եթէ իցէ գաղթավայր անդ իցեն և գաղթականք։

10. Անչիգ դիրսի մաքան նասի, բիլա
ակն կնիակ։

Մինթէ մանթ իցէ շան յազենալ, որչափ ևս կերիցէ զկերակուր։

Ակնարկէ առ անձինս անիրաւ և անյագ, որք ոչ բաւականան, որչափ ևս բարեգութ լինիցիս առ նոսա։

11. Այեր տուտար սրչատան դի տուտանգդրն
կրդալամ լառուտ խուս, յուլեկիսեհ մնչա-
դի տուտար այեր լառուտ խուս։

Եթէ թափեսցես զբաժակ մի ջրոյ ի մէջ ծովու, քաղցրասցի միթէ՞ ադի ջուր ծովուն։

Ծանր յանցանք ինչ կամ մեծ մեղք մի չէ կարելի ջնջել կամ մաքրել թերի և տկար, թէպէտև հաճոյական քանիւք։

12. Այեմ ի տամ տրաքանգ մալամ,
Հիճգա պ դի պօկօ պանդան,
Բրակուսահ ադա ռուչանիա տիդակ։

Սեաւ հաւն որ թռչէ ի գիշերի, Հանգչի ի վերայ պանդան ծառոյ, թեանց շառաչումն գոյ, բայց զինքն ոչ տեսանես։

Փոխաբերաբար ի գործ ածի առ դատավճիռ ինչ անիմանալի հասարակաց։ Երբ Մալայի մի անմարթանայ ըմբռնել զուրամարանութիւն վճռոյն դատաւորին, նշմարէ իմաստնաբար «Սեաւ հաւն որ թռչէ ի գի-«շերի», սակայն եթէ ճշմարտութիւնն պարզ յայտնի է անմեղութեան կամ յանցանաց ամբաստանելոյն, յայնժամ «ճեր-«մակ հաւն որ թռչէ ի տունջեան», որոյ բուն եղանակ ասութեանն է հետևեալն։

13. Այեմ պուտեհ տրաքանգ սիանգ,
Հիճգաղ դի հալաման,
Կը պուդա ռանգ նանգ բանիակ։

Ճերմակ հաւն որ թռչէ ի տունջեան, իջանելով հանգչի ի գաթի անդ, ակն յանդիման բազմութեանն։

14. Ապա չագի, սուտա իա բրակահանդակ
այեմ չահ։

digitised by A.R.A.R.@

Զի՞նչ այլ եւ. օձն վիթխարի փափագէ ունել զհաւ։

ի գործ ածի առ անձինս որք ցուցանեն զգոհունակութիւն ցորչափ ժամանակ ժառանգեն զամենայն ինչ կարեւոր վասն ինքեանց։

15. Բուկան տանեան մրնչեցի պոդի։

Հող երկրին ոչ մարթասցի եղանիլ ո-րիզ։

. Այլ մի առակ որ ցուցանէ զանյուսութիւն ակնկալելոյ զբարիս յանձինս որք են անառակ ի բնէ։

16. Բօնգկօկ գիաառռ բտռոյ, բռուտա գիստռռ չրլեկ։

Կորաքամակն ահա ուղղեցաւ, կոյրն ահա լուսաւորեցաւ։

Կարի հասարակական առակ մի, որ հեգնօրէն ի պէտս ածի առ անձինս, որք յանշքութենէ բարձրանալով առ շքեղ վիճակ, ի բարեյաջողութեան իւրեանց դարձուցանեն զքամակս առ հին բարեկամս։

17. Բագիմանա բուեի գնդանգ, բագիտռչան տառեկիա։

Որպէս ձայնէր թմբուկն, նոյնպէս եւս պարէր։

Համեմատեա Հայերէն ռամկական առածն «ինչպէս որ դափին տաս, էնպէս « պար կգանք »։

18. Բռնիգա դիպտեկ, պրդոռ դիտնդանգ։

Զծաղիկն կորզեաց, զծիղն աքացեաց։ Ասի յումեքէ որ քաղցութեամբ՝ շահէ զաղջիկն՝ ի կնութիւն. ապա ընթանայ անարգաբար ընդ զոքանչն։

19. Բռոմի մանամ եանգ տիատռս կրնա հռոչան։

Ուր է՞ տեղին ի վերայ երկրի, որ ոչ հաղիպեցաւ անձրևոյ։

Զգոյ մահկանացու որ ո՛չ գործիցէ զյանցանս ինչ ի կեանս իւրում։ Հասարակ ճարտար պատասխանի ընդ կանայս Մալայից երբ նախատին վասն զանցառութեան ինչ։

20. Բռուսանգ տուբանգ, դիպիպիս յաղա։

Աղալ զպղպեղն մինչդեռ թռչունն թըռչէ։

Համեմատեա չՀայերէն առութիւնս, դեռեւս ձուկն չբռնած՝ տապակն դնել կըրակին վերայ։

21. Բրոգանոսանգ տիատռս բրռտալի։

Կախել առանց առասանի։

Այսինքն՝ զրկեալ ակներև յապրուստէ, զոր օրինակ Մալայի կինն լքեալ՝ այլ ոչ ամուսնալոյծ յառնէ իւրմէ, որ ոչ կարէ վերստին ամուսնանալ և չունի ոք զինքն օգնող։

22. Բակրահի դիդաբամ միմպի։

Մարտնչիլ յերազի։

Որ աշխատի բուռն հարկանել ի գործ ինչ, որոյ ունայնութիւն ակներև յայտնիէ ամենեցուն։

23. Բիւնգա պուռ գուգոդ, պուտռհ պուռ գուգոռ, տուռահ պուռ գուգոռ մասակ պուռ գուգոռ։

Թռթափեսցի ծաղիկ ի գետին, նոյնպէս և ամենայն ինչ որ է գեղեցիկ. ապա և անցեալքն զաւուրքք և ամենայն ինչ հասունացեալ։

digitised by A.R.A.R.@

Նշանակէ՝ մահն է հասարակ վիճակ ա-
մենեցուն։

24. Բուտատ բայիկ բոպադապադա,
Բուտատ չանատ չանգան սկալի։

Բարիս գործեա՛ չափաւորապէս, զչարիս
գործեա՛ մի՛ երբէք։

Առակին միտքն յայտնի է։

25. Բակիլաբ իկան դիդարամ այեր սկու
սուդան տանու չանտան բրտինանիա։

Ի փայլատակել կայծակին (որ է ակրն-
թարթ մի) և որ լուսաւորէ զՁուր, կա-
բեմ որոշել զարու և զէգ ի ձկունան։

Նշանակէ «Զի՞նչ օգուտ գաղտնապա-
«հութիւն յինէն։ Ամենայն ինչ յայտնի
«է ինձ և կարեմ տեսանել զայս դիւ-
«բաւ»։

26. Բանաքիմ կը պադա բոսկ։

Ձկապիկն կացուցանել դատաւոր։

Գոյ առասպելաբանութիւն մի ընդ Մա-
լայիս թէ բազում ժամանակաւ յառաջ,
երկու երկրագործք մշակէին զիւրաքանչիւ-
րոյն ազարակ կից միմեանց, ճիշդ ի միջա-
վայր որոց՝ աՀէր աղամաթզենի մի։ կագ և
կոխ անվերջանալի էին ի մէջ երկու երկրա-
գործացն թէ ո՞վ էր տէր ծառոյն։ Ապա-
քէն՝ անգամ մի քաղելով զհամայն պտուղ
ծառոյն տան առ կապիկ մի, որում կա-
ցուցին դատաւոր ի միջի իւրեանց։ Կա-
պիկն համահաւասար իրաւունս վճռելով
և յերկուս մասունս բաժանելով զպտուղն՝
եդ ի կշիռս։ Տարաձայնութիւնք շատացան
ի մէջ երկու երկրագործացն ի տես զա-
ռաւելօք բաժին միոյն կամ միւսոյն, որոց
ի բաւարարութիւն՝ կապիկն զորովային իւր
յագենոյր, զհամեմատութիւն կշռոյն պատ-
ճառանս յօդելով մինչև, վերջապէս, ա-
ներևութացաւ պտուղն ամբողջ, թողլով
զգանգատաւորսն ըստ ամենայնի դատար-
կաձեռն։ Ուստի երբ Մալայի դատաւոր մի
անողոք մնոտեաւ երկաբէ գդատ մի, մին-
չև կաշառօք՝ ի վերջին աստիճան մնան-
կութեան հասուցանէ զոլորմելի դատա-
խնդիրսն, զվերյիշեալ բարոյականն առ
նա յարմարեն։

Շուրայարելի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Հ. Ղուկաս Ինճիճեան	145
ՀԱՅՈՒՆԻ Հ. Վ. — Զանգակատունը կը կանգնի՞	154
ՌԸՆԷ ՊԱԶԷՆ. — Տոնասիէն, թրգմ. Հ. Ա. Գոնտաքճեան	162
ՄԷԼԷՓԵԱՆ ԵՂԻԱ. — Զարլզ Տիքընս	175
ԿՈԼՏՈՆԻ. — Դժուարաբարոյ բարերարը թրգմ. Հ. Ա. Տիրոյեան	178
ԱՆԴՐ. Հ. Ն. — Գաբրիէլ Սունդուկեանց	186
ԽՄԲ. — Պիէռ Կիյառ	188
ԳՐԻԳՈՐԵԱՆ Ս. ՏԷՐ Մ. — Հարիւր տարեկք Մալայի ազգի	189

digitised by A.R.A.R.@